Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-099-25.11.2021-ՊԻ-011/0) ԵՒ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-0991 -25.11.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքը սահմանող նորմի կառուցվածքից հանել «շենք» եզրույթը, ինչի պարագայում կստացվի» «կառուցվող անշարժ գույք գնելու իրավունք»: Հետևաբար առաջարկվում է ընդունել ոչ թե	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«շենք» եզրույթից հրաժարվելու մոտեցումը, այլ վերաբերելի այն հոդվածներում, որտեղ առանձնահատուկ նշվում է «բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենք» եզրույթը, այն փոխարինել «բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենք, շենքի մաս կամ բնակելի տուն» եզրույթով:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում «տեղեկություններ» բառը փոխարինել «տվյալներ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ Աժ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 8-րդ մասում նշված «սույն օրենսգրքի 224-րդ հոդվածը» փոխարինել՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 36-րդ հոդվածով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	ՀՀ Աժ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում նշված «170.1» բառերը փոխարինել «224.1» բառերով, ինչպես նաև վերնագրում «Կառուցվող» բառից հետո գրված «Անշարժ գույք բառերը փոխարինել «բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենք, շենքի մաս կամ բնակելի տուն բառերով»:		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական ոչ էական շեղումների հետևանքով բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերի փոփոխությունների դեպքում շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի բաժնի չափերը չեն փոխվում:»: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետով առաջարկված իրավակարգավորման ձևակերպումը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			չէր արտացոլում դրույթի իրական բովանդակությունը, որի արդյունքում ոչ էական շեղումների պարագայում ընդհանուր սեփականության բաժնեմասի որոշման հարցը մնացել էր չկարգավորված:		
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր 9.1 –ին մասով «9.1. կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի հիփոթեքի դեպքում սեփականության իրավունքի փոխանցման ակտի հիման վրա գնորդի սեփականության իրավունքի պետական գրանցման հետ միաժամանակ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով» սահմանված կարգով գրանցվում է նաև ձեռք բերված հիփոթեքը, եթե հիփոթեքի պայմանագրով այլ բան նախատեսված չէ: »: Լրացվող առաջարկության ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կարգավորումներով սահմանված չէ փոխանցման ակտի հիման վրա սեփականության իրավունքի ձեռք բերման պարագայում գրավի իրավունքի գրանցման առանձնահատկությունը:		
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում «շենքերի» բառից հետո լրացնել «շենքերից մասերի կամ բնակելի տների» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Առաջարկվում է Օրենսգրքի 570.1-ին հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենք, շենքի մաս կամ բնակելի տուն»:	Ընդունվել է:	Ընդունվել է: